Արձանագրություն N 11

## ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-20/1» ծածկագրով երկու փուլով մրցույթի գնահատող հանձնաժողովի՝ առաջին փուլի հրավերի վերաբերյալ պարզաբանում ներկայացնելու մասին նիստի

ք. Երևան

«18» մայիսի 2020թ.
Ժամը՝ 17:30

Մասնակցում էին՝

*Հանձնաժողովի նախագահ*

Ժ. Տիտիզյան – ՖՆ գործառնական վարչության պետ

*Հանձնաժողովի անդամներ*

Հ. Հարությունյան - ՖՆ իրավաբանական վարչության պետի պաշտոնակատար.

Ռ. Գաբրիելյան - ՖՆ բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության սոցիալական ընթացիկ ծրագրերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ.

Ս. Շահնազարյան - ֆինանսների նախարարության գնումների քաղաքականության վարչության պետ.

Կ. Ալավերդյան - ՖՆ հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման, հաշվետվությունների մշտադիտարկման վարչության պետ.

Գ. Զարգարյան - ՖՆ բյուջեների կատարման հաշվետվությունների վարչության պետ.

Ա. Մարգարյան - ՖՆ պետական պարտքի կառավարման վարչության պետ.

Գ. Վարդանյան - ՖՆ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության գլխավոր մասնագետ.

Ա. Եսայան - ՖՆ պետական բյուջեի նկատմամբ պարտավորությունների կառավարման վարչության պետ.

Է. Հակոբյան – ՖՆ մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ.

Վ. Հարությունյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության պետ

*Գնումները համակարգող*

Ա. Աղաբաբյան - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էր՝

### 1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

---

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հաստատել և ներկայացնել հրավերի վերաբերյալ պարզաբանումը
2. Հաստատել հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը :

Ընդունվել է որոշում. կողմ՝ 11, դեմ՝ 0:

### 2. Առաջին փուլի հրավերի վերաբերյալ պարզաբանման մասին

---

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված՝ <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 14-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով գնահատող հանձնաժողովն իր իրավասության շրջանակներում

Որոշեց.

1. հաստատել և տրամադրել «ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի առաջին փուլի հրավերի վերաբերյալ 2020 թվականի մայիսի 14-ին ստացված հարցման վերաբերյալ պարզաբանումը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 11, դեմ՝ 0:

### 3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի ու վայրի մասին

---

«ՀՀ ՖՆ-ԵՄԾՁԲ-20/1» ծածկագրով ընթացակարգի առաջին փուլի հայտերի բացման նպատակով հանձնաժողովի նիստը տեղի կունենա սույն թվականի հունիսի 2-ին ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 11, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ժ. Տիտիզյան

Հանձնաժողովի անդամներ՝ ____________ Հ. Հարությունյան

____________ Ռ. Գաբրիելյան

____________ Ս. Շահնազարյան

____________ Կ. Ալավերդյան

____________ Գ. Զարգարյան

____________ Ա. Մարգարյան

____________ Գ. Վարդանյան

____________ Ա. Եսայան

____________ Է. Հակոբյան

____________ Վ. Հարությունյան

Գնումները համակարգող՝ ____________ Ա. Աղաբաբյան